ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հոդվածի հղումը. Ավագյան Գ., Վարդանյան Ք. (2023), Պետություն-մասնավոր գործընկերությունը որպես ենթակառուցվածների զարգացման խթան, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 1(1), 21-44, DOI: 10.52174/29538114_2023.1-21
Ներկայացվել է խմբագրություն՝18.05.2023 թ.
Ուղարկվել է գրախոսության՝24.05.2023 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝18.07.2023 թ.

ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0003-3395-2473

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0002-7198-3740

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆ

Պետություն–մասնավոր գործընկերությունը (ՊՄԳ) լայնորեն տարածվում է աշխարհում որպես հանրային նշանակալից ծրագրերի իրականացմանը, մասնավորապես՝ ենթակառուցվածքների ձևավորմանը, զարգացմանը, ծառայությունների մատուցմանը նպաստող արդյունավետ մեխանիզմ: Հոդվածում հիմնավորվել է պետություն–մասնավոր գործընկերության դերը ենթակառուցվածքների զարգացման գործում, ինչպես նաև շեշտադրվել է պետության և մասնավորի նյութական, ֆինանսական, մարդկային ռեսուրսների ու միջոցների համախմբման կարևորությունը: Հիմնավորվում է նաև, որ պետություն–մասնավոր գործընկերությունը արդյունավետ մեխա-

նիզմ է, քանի որ մասնավոր հատվածի տեխնոլոգիաները և նորարարությունները համատեղվում են պետական հատվածի խթանների հետ, և որ միայն պետության միջոցներով հնարավոր չէ ֆինանսավորել բոլոր ենթակառուցվածքների պահպանման և զարգացման հետ կապված ծրագրերը:

Իրականացվող նախագծերի շրջանակներում պետության և բիզնեսի ռեսուրսների միավորման արդյունքում ձևավորվում են լրացուցիչ մրցակցային առավելություններ, իսկ ռիսկերը բաշխվում են պետության և գործարարության միջև:

ՀՀ-ում ևս հանրային ֆինանսական ռեսուրսները սահմանափակ են, որը պատճառ է դառնում բնակչությանը տրամադրվող ծառայությունների և պետության կողմից իրականացվող մի շարք պարտավորությունների որակի անկման: Ստեղծված իրավիճակում անժխտելի է ՊՄԳ ձևավորման և զարգացման կարևորությունը, որը երկարաժամկետում կհանգեցնի ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների որակական կայուն աճի: Հեղինակները ներկայացրել են ՀՀ տնտեսության որոշ ոլորտներում իրականացվող ՊՄԳ ծրագրերը, բացահայտել դրանց առանձնահատկությունները: Կատարված ուսումնասիրությունը թույլ է տվել եզրակացնել, որ ՊՄԳ ծրագրերի իրականացումը մեր երկրում ևս կարող է դառնալ արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների նորարարական զարգացման հիմնասյուն:

Հիմնաբառեր. *պետություն–մասնավոր գործընկերություն, տնտեսություն, ենթակառուցվածք, կառավարություն, ռեսուրսների համախմբում*

JEL: L32, H54

DOI: 10.52174/29538114_2023.1-21

Ներածություն: Վերջին շրջանում աշխարհի զարգացած երկրները մասնավոր հատվածին ավելի ու ավելի շատ են մասնակից դարձնում տնտեսական քաղաքականության նպատակների իրականացման գործընթացին: Սրա վառ օրինակն են պետություն–մասնավոր համագործակցությունն ու դրա կիրառության տարբեր մոդելները: Պետություն–մասնավոր գործակցության արդյունքում պետությունը կարողանում է խնայել սեփական միջոցներն ու դրանք ուղղել հանրային կարևորության այլ խնդիրների լուծմանը, իսկ մասնավոր հատվածը, համագործակցելով պետության հետ, կարողանում է օգտագործել սեփական ռեսուրսները և հավելյալ արդյունք ու եկամուտ ապահովել:

ՊՄԳ-ն ենթակառուցվածքներ է ներմուծում մասնավոր հատվածի միջոցները և խթանները, միաժամանակ՝ պահանջվում է կառավարության մասնակցայնություն՝ որպես պայմանագրի կողմ և կարգավորող մարմին: ՊՄԳ-ն թույլ է տալիս մասնավոր կապիտալը ներգրավել ենթակառուցվածքների ոլորտ և իրականացվող ծրագրերի ռիսկերը կիսել կառավարության ու մասնավորի միջև: ՊՄԳ-ն արդյունավետ համատեղում է գործընկերների ռեսուրսներն ու ներուժը. պետության՝ մակրոկառավարման և կարգավորման, մասնավոր հատվածի՝ ձեռնարկատիրական գործունեության, կառավարման, ներդրումների, նորարարությունների արդյունավետ յուրացման կարողությունները: Ըստ էության, ՊՄԳ ձևաչափը հնարավորություն է տալիս, առանց հանրային կյանքի կազմակերպման մոդելի ու կառուցվածքի խորքային փոփոխությունների, օգտագործելու սեփականության՝ պետական և մասնավոր ձևերի առավելությունները:

Հոդվածի նպատակն է բացահայտել ու ընդհանրացված ներկայացնել ՊՄԳ տնտեսագիտական բովանդակությունը և դերը ենթակառուցվածքների

զարգացման գործում: Նպատակին հասնելու համար հոդվածում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

ա. քննական ուսումնասիրության ենթարկել ՊՄԳ սահմանումները, ընդգծել դրանցում առկա տարբերություններն ու նմանությունները և առաջարկել ՊՄԳ տնտեսագիտական բովանդակության ընդհանրական մեկնաբանություն,

բ. հիմնավորել ՊՄԳ մեխանիզմով պետության և մասնավորի ռեսուրսների համախմբման, պետական խթանների և մասնավոր հատվածի առաջադիմական տեխնոլոգիաների զուգակցման դերը ենթակառուցվածքների և նորարարությունների զարգացման գործում,

գ. ներկայացնել ՀՀ-ում պետության և մասնավորի գործակցության փորձը ենթակառուցվածքների զարգացման ոլորտում և գործող որոշ ՊՄԳ ծրագրերի առանձնահատկությունները:

ՀՀ-ում պետություն–մասնավոր գործընկերության ձևաչափը նոր է և դեռևս լայն կիրառություն չունի: Խնդիրը, թերևս, ոլորտը կարգավորող օրենքի, հայեցակարգի և հարակից իրավական ակտերի նոր լինելն է և, դրանով պայմանավորված, անբավարար տեղեկացվածությունը, ինչը սահմանափակում է պետության և մասնավորի համագործակցության ձևերի վերաբերյալ համապարփակ պատկերացումների ձևավորման հնարավորությունը: Պետություն–մասնավոր գործընկերության կիրառական օրինակների սահմանափակ լինելն, իր հերթին, բարդացնում է քննարկվող համագործակցության արդյունքների վերլուծությունը ֆինանսական տեսանկյունից:

Գրականության ակնարկ: Արտասահմանյան մասնագիտական գրականության մեջ թեև պետական–մասնավոր գործընկերության՝ ՊՄԳ բազմաթիվ և տարբեր մոտեցումներով առանձնացող սահմանումներ կան, սակայն դրանք հիմնականում շեշտադրում են պետության և մասնավոր բիզնեսի համագործակցությունն ու այդ գործակցության շահավետությունը:

ՊՄԳ սահմանումներից առավելապես օգտագործվում է Համաշխարհային բանկի բնորոշումը. ՊՄԳ-ն կառավարության համար պետական ենթակառուցվածքներ և/կամ ծառայություններ ձեռք բերելու և իրականացնելու մեխանիզմ է՝ օգտագործելով մասնավոր հատվածի ռեսուրսներն ու փորձը: Այնտեղ, որտեղ կառավարությունները բախվում են ենթակառուցվածքների սակավության կամ ծերացման հետ և պահանջում են ավելի արդյունավետ ծառայություններ, մասնավոր հատվածի հետ համագործակցությունը կարող է նպաստել նոր լուծումների առաջարկմանն ու ֆինանսավորմանը: ՊՄԳ-ն համատեղում է պետական և մասնավոր հատվածների հմտություններն ու ռեսուրսները ռիսկերի և պարտականությունների բաշխման միջոցով: Սա հնարավորություն է տալիս կառավարություններին օգտվելու մասնավոր հատվածի փորձից և թույլ է տալիս կենտրոնանալ քաղաքականության, պլանավորման և կարգավորման վրա՝ պատվիրակելով ամենօրյա գործունեությունը[1]:

«ՊՄԳ-ն համաձայնություն է հանրային և մասնավոր կողմերի միջև արտադրության և ենթակառուցվածքային ծառայություններ մատուցելու, լրացու-

[1] Տե՛ս https://ppp.worldbank.org/public-private-partnership/about-public-private-partnerships

ցիչ ներդրումներ ներգրավելու նպատակով, և, ինչն ավելի կարևոր է, ծառայում է որպես բյուջեի ֆինանսավորման արդյունավետությունը բարելավելու միջոց» [2]:

Հ. Համը և Ջ. Կոպենջանը իրենց հոդվածում[3] անդրադառնում են պետական–մասնավոր գործընկերության կազմակերպական դժվարություններին ու ռիսկերին և փորձում են պատասխանել այն հարցին, թե ինչպես կարելի է դրանք հաղթահարել:

Հեղինակների առաջարկած սահմանման համաձայն՝ «ՊՄԳ-ն երկարաժամկետ համագործակցություն է պետություն և մասնավոր հատվածների միջև, որի շրջանակներում նրանք համատեղ ապրանք կամ ծառայություն են մշակում, կիսում են դրանց հետ կապված ռիսկերը, ծախսերը և ռեսուրսները: ՊՄԳ նպատակն է ոչ միայն ստեղծել համատեղ արտադրանք նորարարական լուծումներով, այլ նաև առաջարկում է ինստիտուցիոնալ թարմացում՝ աշխատանքային մեթոդների ընթացակարգերի, համաձայնագրերի և հաստատությունների արդիականացում»:

Ինչպես երևում է, այս տեսաբանները կարևորել են ապրանքի կամ ծառայության համատեղ արտադրության ռիսկերի բաշխումը կողմերի միջև:

Ըստ Ա.Վ. Չեռնովի՝ պետություն–մասնավոր համագործակցությունը պետության և բիզնեսի իրավահավասարության ապահովման ու շահերի համակարգման մեխանիզմ է, որը դրսևորվում է պետության նպատակների իրագործմանն ուղղված խոշոր ներդրումային տնտեսական ծրագրերի իրականացման շրջանակներում[4]: Ս.Վ. Մուլյավան արձանագրում է, որ «պետություն–մասնավոր համագործակցություն» եզրույթն օգտագործվում է լայն իմաստով՝ որպես պետական իշխանության և մասնավոր բիզնեսի համագործակցություն բոլոր ոլորտներում[5]: Լայն իմաստով ՊՄԳ սահմանում է ներկայացնում նաև Վ. Վարնավսկին, ըստ որի ՊՄԳ-ն ազգային և միջազգային, լայնածավալ և տեղային բնույթի, բայց նշանակալից նախագծեր իրականացնելու նպատակով ձևավորված ինստիտուցիոնալ և կազմակերպչական դաշինք է պետության և բիզնեսի միջև: Ըստ Վ.Վարնավսկու՝ ՊՄԳ-ն պետության և բիզնեսի միջև ինստիտուցիոնալ դաշինք է, որի նպատակը հանրային նշանակության նախագծերի և ծրագրերի իրականացումն է տարբեր ոլորտներում[6]:

Ա. Զելդները ՊՄԳ-ն դիտարկում է որպես հարաբերություն պետության, բիզնեսի և քաղաքացիական հասարակության միջև: Այդպիսի գործակցությունը ներառում է գործընկերության տարբեր ձևեր, որոնք հաշվի են առնում

---

[2] **Делмон Дж.**, Государственно-частное партнѐрство в инфраструктуре; практическое руководство для органов государственной власти, The World. Bank, 2010.

[3] Տե՛ս **Ham H. van, Koppenjan J.,** Building Public-Private Partnerships: Assesing and Manag- ing Risks in Port Development//Public Management Review, vol. 3, № 4, 2001, https://www.researchgate.net/publication/254348156_Building_public-private_partnerships_Assessing_and_managing_risks_in_port_development#fullTextFileContent

[4] Տե՛ս **Чернов А.В.**, Государственно-частное партнерство в сфере малоэтажного жилищного строительства. Журнал «Недвижимость и инвестиции. Правовое регулирование», 4(45), декабрь, 2010, https://dpr.ru/journal/journal_43_11.htm

[5] Տե՛ս **Мулява С. В.**, Совершенствование функционирования государственно-частного партнерства в России, http://www.m-economy.ru/art.php?nArtId=4978

[6] Տե՛ս **Варнавский В.,** Государственно-частное партнерство в России: проблемы становления, https://strana-oz.ru/2004/6/gosudarstvenno-chastnoe-partnerstvo-v-rossii-problemy-stanovleniya

իրականացվող ծրագրերի որոշակի առանձնահատկություններ և ապահովում են պետական ու մասնավոր սեփականության օգտագործման ամենաարդյունավետ ուղիների ընտրությունը[7]: Պետության և մասնավորի գործակցությունը ներառում է տնտեսության տարբեր ոլորտներ: Մասնավորապես՝ Դ.Ա. Պետրովը նշում է, որ պետություն–մասնավոր գործակցությունը կարող է կիրառվել՝ զարգացնելու համար արտադրության, տրանսպորտի և նորարարության ենթակառուցվածքները, օգտագործվել բնակարանային, կոմունալ, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում, նաև՝ աջակցելու համար գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացմանը[8]: Մ.Ս. Հայրապետյանը նշում է, որ պետություն–մասնավոր համագործակցությունը պետական իշխանության և մասնավոր հատվածի միջև տնտեսական հարաբերությունների ավանդական մեխանիզմների զարգացման արդյունք է՝ ենթակառուցվածքային օբյեկտների մշակման, պլանավորման, ֆինանսավորման, շինարարության և շահագործման նպատակով[9]: Ի.Մ. Աբլաևը ՊՄԳ-ն բնութագրելիս առանձնացնում է մի շարք սկզբունքներ, որոնց վրա հիմնվում է համագործակցությունը: Դրանցից են. հավասարությունն ու ազատությունը, հատուցման սկզբունքը, երբ պետությունը պարտավորվում է փոխհատուցել ընկերության կատարած ներդրումները, կորցրած եկամուտը՝ պայմանագրային հարաբերությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում, պահպանել չմիջամտելու սկզբունքը. պետությունը ՊՄԳ պայմանագիրը ստորագրելուց հետո չպետք է միջամտի մասնավոր ընկերության գործունեությանը, որն ինքնուրույն է ընդունում բոլոր վարչական, տնտեսական, կադրային, կառավարման որոշումները, մասնավորի՝ ՊՄԳ նախագծին մասնակցայնության սկզբունքով միանալը և այլն[10]:

Տարբեր հեղինակներ նշում են, որ ՊՄԳ-ն ընդլայնում է սահմաններն ու ներառում ավելի շատ ոլորտներ: Թվային տնտեսությանն անցումը կանխորոշել է, որ ՊՄԳ-ն իր վրա վերցնի մտավոր, գիտատեխնիկական և ներդրողական գործունեության զարգացման խնդիրները[11]: Ե.Ա. Գրոմովան կարծում է, որ «....թվային տնտեսության զարգացման առանցքային ոլորտներից մեկի՝ ռոբոտատեխնիկայի և արհեստական բանականության ստեղծումն ու զարգացումը արտասահմանում տեղի են ունենում ՊՄԳ հիման վրա»[12]: Նույն հեղի-

---

[7] Տե՛ս **Зельднер А. Г.,** Смешанная социально-устойчивая экономическая система: проблемы собственности, «Экономические науки», 1, 2010, էջ 23-27, https://www.hse.ru/data/2010/09/29/1219815241/ecsn_201001.pdf

[8] Տե՛ս **Петров Д. А.,** Государственно-частное партнерство: понятие и правовые формы реализации. *Вестник Санкт-Петербургского университета. Право*, 2012 (2), 34-47, https://lawjournal.spbu.ru/article/view/3977

[9] Տե՛ս **Айрапетян М. С.,** Зарубежный опыт использования государственно-частного партнерства, https://center-bereg.ru/o3811.html

[10] Տե՛ս **Аблаев. И. М.,** Основные принципы государственно-частного партнерства в условиях модернизации российской экономики, https://dspace.kpfu.ru/xmlui/bitstream/handle/net/105892/5_2013_2_99_ss17_20.pdf?sequence=-1

[11] Տե՛ս **Леонова Г.И.,** Проблемы и перспективы развития государственно – частного партнерства (научная статья): Индустриальная экономика. 2022, № 3(4), էջ 330-336, https://www.elibrary.ru/item.asp?id=48688035

[12] **Громова Е. А.,** Государственно-частное партнерство в цифровую эру: поиск оптимальной правовой формы, https://urfac.ru/?p=1125

նակը հաստատում է նաև, որ ԵՄ-ում թվային ինդուստրիայի ևս մի հեղափոխական ուղղության՝ գերհամակարգիչների զարգացումը ևս տեղի է ունենում ՊՄԳ հիման վրա[13]:

Հ. Սարգսյանն իր հոդվածում առանձնացրել է այն հատկանշական բնութագրերը, որոնք թույլ են տալիս սահմանել պետական իշխանությունների և մասնավոր հատվածի միջև փոխգործակցության տարբեր ձևերը որպես ՊՄԳ: Հեղինակը քննականորեն մեկնաբանելով Է. Սավասի, Ջ. Դելմոնի, Է. Քլիջնի, Գ. Թեյսմանի, Հ. Համի և Ջ. Կոպենջանի, Գ. Հոջի և Կ. Գրիվի առաջարկած սահմանումները՝ կարծում է, որ դրանցում չեն նշվում այն պայմանները, որոնց համաձայն համագործակցության ոլորտները կսահմանվեն որպես ՊՄԳ: Այսինքն՝ ՊՄԳ-ն դիտարկվում է որպես ցանկացած հարաբերություն պետության և մասնավոր հատվածների միջև, ինչը չի արտահայտում հասկացության էությունը և դրա՝ իբրև առանձին տնտեսական կատեգորիայի տարբերակիչ հատկանիշները[14]:

Պետություն–մասնավոր գործընկերությունը համագործակցություն է պետական և մասնավոր հատվածների միջև՝ պետական հատվածի կողմից ավանդաբար ներկայացվող նախագիծ կամ ծառայություն մատուցելու նպատակով: ՊՄԳ առավելությունն այն է, որ մասնավոր ձեռնարկությունների կառավարման հմտությունները և ֆինանսական խելամտությունը կարող են ավելի լավ արժեք ստեղծել հարկ վճարողների համար, երբ օգտագործվում են պետական և մասնավոր հատվածների միջև պատշաճ համագործակցության պայմանավորվածություններ[15]:

ՊՄԳ գնահատման ավելի հիմնավոր մեթոդաբանական վերլուծություն կատարելու նպատակով մեկնաբանենք պետական հատվածի և սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը վերաբերող գրականության որոշ աղբյուրներ:

Բազմաթիվ հեղինակներ՝ Է. Ատկինսոնը, Ջ. Ստիգլիցը, Ա. Աղանբեկյանը, Է. Յասինը Ս. Գլազևը և ուրիշներ, անդրադարձել են սոցիալ-տնտեսական զարգացման վրա ենթակառուցվածքների մակարդակի ազդեցության խնդիրներին: Զարգացած երկրները ինտենսիվորեն միջոցներ են հայթայթում ենթակառուցվածքները նոր մակարդակի հասցնելու համար: Այնուամենայնիվ, այդ գործընթացներն ուղեկցվում են բազմաթիվ դժվարություններով, որոնցից է ֆինանսական և այլ միջոցների անբավարարությունը, ինչը պահանջում է լրացուցիչ մասնավոր ներդրումների ներգրավում այդ ոլորտի ծրագրերի ֆինանսավորման համար: Ա. Բեդնյակովը կարևորել է ենթակառուցվածքների՝ որպես երկրի տնտեսության կայուն զարգացման առանցքային գործոնի, արդյունքում՝ երկրի մրցունակության բանալու դերը[16]: Հեղինակը իրավացիորեն նշում է, որ հաճախ պետական բյուջեի միջոցների սղությունը

---

[13] Տե՛ս նույն տեղը:

[14] Տե՛ս **Սարգսյան Հ.,** Հանրային և մասնավոր գործընկերության հիմնական առանձնահատկությունները, Բանբեր Երևանի համալսարանի, № 2 (23), 2017, https://journals.ysu.am/index.php/bulletin-ysu-economics/article/view/259/182

[15] Տե՛ս https://www.icao.int/sustainability/pages/im-ppp.aspx

[16] Տե՛ս **Бедняков А.,** Роль инфраструктуры в обеспечении устойчивого социально-экономического развития и конкурентоспособности актуальные вопросы в России и за рубежом. Статья, 2021, https://roscongress.org/materials/rol-infrastruktury-v-obespechenii-ustoychivogo-sotsialno-ekonomicheskogo-razvitiya-i-konkurentosposo/

թույլ չի տալիս իրականացնել ենթակառուցվածքների զարգացման ֆինանսավորման ողջ ծավալը, և օգնության է գալիս ենթակառուցվածքային ներդրումների միակ լրացուցիչ աղբյուրը՝ քաղաքացիների և ընկերությունների մասնավոր խնայողությունները: Հետևաբար՝ պետություն–մասնավոր գործընկերության խնդիրն առավել քան երբևէ արդիական է դառնում: Ենթակառուցվածքների զարգացման կարևորության վերաբերյալ համապարփակ հետազոտության հեղինակ Ե. Շացկայան[17] կարծում է, որ անհնար է երկրի գլոբալ մրցունակության ապահովումը՝ առանց նոր ենթակառուցվածքների ձևավորման և մասնավոր ու պետական աղբյուրներից ներդրումների ներգրավման, ինչը հնարավորություն կտա մշակելու ինովացիոն գործընթացների կառավարման նոր մեխանիզմներ, որոնք ավելի համահունչ են ազգային տնտեսության նորարական զարգացման խնդիրներին: Սա էլ, իր հերթին, հնարավոր է միայն զարգացած ինստիտուցիոնալ միջավայրի և հաջողությամբ գործող պետական–մասնավոր համագործակցության շնորհիվ:

Այսպիսով՝ վերոնշյալ և մասնագիտական գրականության մեջ առկա այլ սահմանումների քննական ուսումնասիրությունը թույլ է տվել եզրակացնել, որ ՊՄԳ-ն ազգային տնտեսության վրա ազդելու լծակներից մեկն է և կարելի է բնութագրել որպես պետության և մասնավորի երկարաժամկետ փոխգործակցություն, որպես ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ՝ ներդրումներ ներգրավելու որակապես նոր և արդյունավետ միջոց, որի հիմնական նպատակն ի շահ հասարակության ենթակառուցվածքների զարգացումն է՝ կողմերից յուրաքանչյուրի ռեսուրսներն ու փորձը համատեղելու ճանապարհով, ինչը թույլ կտա նվազագույն ռիսկով և ծախսերով բարձրորակ ծառայություններ մատուցել հասարակությանն ու տնտեսավարող սուբյեկտներին: Նշենք նաև, որ ՊՄԳ առավել ընդգծված հատկանիշներն են որոշակի ծրագրի իրականացման նպատակով պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտի միջև երկարաժամկետ պայմանագրի առկայությունը, պետական կամ մունիցիպալ կառավարության առջև դրված խնդիրների և գործառույթների մի մասի՝ մասնավոր հատվածին փոխանցումը, ծրագրի ֆինանսավորմանը մասնավոր կապիտալի ներգրավումը, պետական և մասնավոր գործընկերների միջև նախագծի ռիսկերի բաշխումը:

Հետազոտության մեթոդաբանություն: Պետություն–մասնավոր գործընկերության տնտեսագիտական բովանդակության մեկնաբանման և մասնագիտական գրականության մեջ առկա բազմաթիվ սահմանումների քննական ուսումնասիրության, դրանց ընդհանրական կողմերի նկարագրության և մեկնաբանման, ընդհանուր և տարբերիչ գծերի առանձնացման նպատակով կիրառվել են «պետություն–մասնավոր գործընկերություն» հասկացության սահմանումների վերբալ՝ նկարագրական, քննական համեմատության, որակական եզրահանգումների և ընդհանրացման մեթոդները: Պետություն–մասնավոր գործընկերության օտարերկրյա փորձի ուսումնասիրությունը կատարվել է

[17] Տե՛ս **Шацкая Е.Ю.**, Роль инфраструктуры как активного элемента обеспечения устойчивого развития современных экономических систем, «Экономика, предпринимательство и право», том 12, № 4, 2022, էջ 1405-1416. – doi: 10.18334/epp.12.4.114364, https://1economic.ru/lib/114364

նկարագրական և համեմատման մեթոդների հիման վրա: Հաճախ տնտեսական իրավիճակը, մասնավորապես՝ պետության և մասնավոր հատվածի փոխազդեցության հետ կապված իրողությունները նկարագրելու, հետազոտելու միասնական տեսություն, մոդել գոյություն չունի, և ուսումնասիրվող ոլորտի փաստացի վիճակի փոփոխությունները պահանջում են հետազոտության տարբեր մոտեցումների օգտագործում: Դա է պատճառը, որ ՀՀ-ում կիրառվող ՊՄԳ ծրագրերի ուսումնասիրության, դրանց հիմնական բնութագրիչների ներկայացման, այդ ծրագրերի շրջանակներում պետության և մասնավորի իրավունքների ու պարտականությունների քննարկման նպատակով սույն հոդվածում օգտագործվել են դինամիկ հետազոտության, համակարգային վերլուծության և ընդհանրացման մեթոդները: Հոդվածում կիրառվել են նաև գիտական վերացարկման և պատմական մեթոդները: Գիտական վերացարկման միջոցով բացառվել են տնտեսության սուբյեկտների միջև անհատական ոչ էական հարաբերությունները, և շեշտադրվել է մի քանի առարկայական հատկանիշների դիտարկումը: Պատմական մեթոդի կիրառմամբ քննվել են *պետություն–մասնավոր գործընկերություն* մոդելի կիրառման նախադրյալները, շարժառիթները և ազդող գործոնները:

Նյութի ընկալման և դիտողականության մեծացման նպատակով աշխատանքում կիրառվել են տվյալների աղյուսակավորման և գրաֆիկների կառուցմամբ ներկայացման մեթոդները: Աշխատանքի համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ-ում ՊՄԳ ոլորտում ընդունված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը, հայրենական ու արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումների տեսական ու մեթոդական դրույթները, վերլուծությունները, ՀՀ էկոնոմիկայի, ֆինանսների նախարարությունների տեղեկատվությունը:

Վերլուծություն: Պետություն–մասնավոր համագործակցության ժամանակակից ձևաչափն ի հայտ է եկել 20-րդ դարի վերջին: Նոր, ազատական քաղաքականությունը կարևորում էր պետական կառավարման մեջ մասնավոր հատվածի ներգրավվածության ընդլայնումը: ՊՄԳ-ն երկրների կառավարությունները դիտում էին որպես նոր ենթակառուցվածքների հիմնումը և վերանորոգումը ֆինանսավորելու առաջադիմական մեթոդ:

Այսօր ՊՄԳ մեխանիզմը գործում է շատ երկրներում, սակայն դեռևս այս գործիքի՝ որպես ֆինանսավորման լրացուցիչ հնարավորության կիրառումը շարունակում է վիճահարույց լինել: Մտավախությունների հիմնական պատճառը, ըստ քննադատների, պետական ներդրումներից ստացվող եկամտի՝ մասնավոր ֆինանսավորողի եկամտից ցածր լինելն է:

Եվրամիության երկրներում ՊՄԳ-ն պետության և գործարարների միջև համագործակցության ձև է, որի նպատակն է ֆինանսավորման, ենթակառուցվածքների շինարարության, արդիականացման, կառավարման, շահագործման կամ ծառայությունների մատուցման ապահովումը[18]: Եվրոպական Միության երկրներում հանրային հատվածի ենթակառուցվածքների պահպանման գործում ՊՄԳ կիրառումը դիտվում է որպես կարևոր տնտեսական գործիք, թեև Եվրոմիության և Կենտրոնական Ասիայի երկրներից 19-ում է

[18] Տե՛ս Green Paper on Public-Private Partnerships and Community Law on Public Con- tracts and Concessions Commission of the European Communities Brussels, 2003:

արձանագրվում ևս ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի մասնակցություն: 1990–2022 թթ. ծրագրերի գերակշիռ մասն իրականացվել է էլեկտրաէներգետիկայի ոլորտում. 554 ծրագիր 133,4 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումների ընդհանուր ծավալով: Ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի մասնակցության հիմնական տեսակը նոր նախագծերն են (նախագծերի 70%-ը, ընդհանուր ներդրումների 74.4%-ը)[19]:

Ռուսաստանում պետություն–մասնավոր գործընկերության ոլորտը դինամիկ զարգանում է, երկրում առկա են ՊՄԳ հաջողված նախագծերի բազմաթիվ օրինակներ տնտեսության բոլոր հիմնական ոլորտներում, մասնավորապես՝ էլեկտրաէներգետիկայի, տրանսպորտի, առողջապահության և կոմունալ ծառայությունների: 1990–2022 թթ. ժամանակահատվածում ներդրումների ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ենթակառուցվածքային հատվածը էլեկտրաէներգետիկան է, որտեղ իրականացված ծրագրերը 134-ն են՝ 36,1 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումների ընդհանուր ծավալով: Ի դեպ, 2007–2022 թթ. այս հատվածի տեսակարար կշիռը զգալիորեն փոքրացել է, և ամենամեծ տեսակարար կշիռ ունեցել են երկաթուղիներում կատարված ներդրումները[20]:

Հարևան երկրներում պատկերն այսպիսին է.

Վրաստան. Դիտարկվող ժամանակահատվածում երկրում իրականացվել է 33 ծրագիր՝ շուրջ 3 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումների ընդհանուր ծավալով: Ծրագրերի կեսն իրականացվել է էլեկտրաէներգետիկայի ոլորտում՝ 17 ծրագիր 1,6 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումների ընդհանուր ծավալով: Վերջին վեց տարում իրականացվել է ընդամենը 4 ծրագիր՝ 197 մլն ԱՄՆ դոլար ներդրումների ընդհանուր ծավալով: Ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի մասնակցության հիմնական տեսակը օտարումն է[21]:

Թուրքիա: 1990–2022 թթ. ժամանակահատվածում երկրում իրականացվել է 259 ծրագիր՝ 156,0 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումների ընդհանուր ծավալով: Ծրագրերի 76.4%-ը վերաբերում է էլեկտրաէներգետիկայի ոլորտին՝ 66,1 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումների ընդհանուր ծավալով: Վերջին վեց տարում իրականացվել է 43 ծրագիր՝ 21,1 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումների ընդհանուր ծավալով: Այդ ժամանակահատվածում մեծ տեսակարար կշիռ են ունեցել մեկ ծրագրով օդանավակայանում կատարված ներդրումները՝ 8,2 մլրդ ԱՄՆ դոլար: Ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի մասնակցության հիմնական տեսակը նոր նախագծերն են[22]:

Ադրբեջան: Ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի մասնակցության մակարդակը ցածր է: Դիտարկվող ժամանակահատվածում երկրում իրականացվել է 8 ծրագիր՝ 1,1 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումների ընդհանուր ծավալով, որից 6-ը՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտում՝ նշված ներդրումների շուրջ 98%-ով: 2017–2022 թթ. իրականացվել է 3 ծրագիր՝ 3-ն էլ էլեկտրաէներգետիկայի ոլորտում[23]:

---

[19] https://ppi.worldbank.org/en/snapshots/region/europe-and-central-asia
[20] Տե՛ս https://ppi.worldbank.org/en/snapshots/country/russian-federation
[21] Տե՛ս https://ppi.worldbank.org/en/snapshots/country/georgia
[22] Տե՛ս https://ppi.worldbank.org/en/snapshots/country/turkey
[23] Տե՛ս https://ppi.worldbank.org/en/snapshots/country/azerbaijan

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի ծրագրով կարևորվել է պետություն–մասնավոր գործընկերության քաղաքականության մշակումը և ՊՄԳ ծրագրերի արդյունավետ իրականացումը[24]: ՀՀ Կառավարությունը որպես նպատակ է սահմանել իրականացնելու այնպիսի ՊՄԳ ծրագրեր, որոնց շրջանակներում կնքված պայմանագրերը երկարաժամկետ կտրվածքով արդյունավետ կկառավարեն հանրային և մասնավոր գործընկերների միջև բաշխվող ռիսկերը, կնպաստեն ՊՄԳ ծրագրերի շրջանակներում երկրում ենթակառուցվածքների ստեղծմանը և զարգացմանը, ինչպես նաև կապահովեն հանրությանը մատուցվող ծառայությունների որակի և արժեքի վրա հիմնված դրական արդյունքներ: Նշված նպատակներին հասնելու համար նախաձեռնվել են ՊՄԳ ծրագրերի մշակմանն ու իրականացման օրենսդրական դաշտի ձևավորմանն ուղղված գործընթացներ:

ՊՄԳ քաղաքականության մշակման շրջանակներում 2017 թ. նոյեմբերի 9-ի ՀՀ Կառավարության նիստում հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության պետություն–մասնավոր գործընկերության քաղաքականություն» փաստաթուղթը: 2019 թ. հունիսի 28-ին ընդունվել է «Պետություն–մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են ՊՄԳ հարաբերությունները, իրականացման չափանիշները, ընթացակարգերը, կառավարման ինստիտուցիոնալ շրջանակներն ու կիրառելի սկզբունքները: Սա ՊՄԳ գործընթացը կարգավորող հիմնական իրավական ակտն է[25]: Օրենքի 5-րդ հոդվածը կարգավորում է ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, իսկ համաձայն միևնույն հոդվածի առաջին կետի՝ համապատասխան ոլորտները սահմանվում են Կառավարության որոշմամբ: Որոշման 2-րդ կետի առաջին ենթակետով ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներ են սահմանվել առողջապահությունը, կրթությունը, էներգետիկան, ջրային տնտեսությունը, տրանսպորտային ենթակառուցվածքներ և ծառայությունները, կոշտ թափոնների հավաքում, մշակում և հեռացումը, փոստային ենթակառուցվածքներ և ծառայությունները, կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի տրամադրումը և էլեկտրոնային նույնականացման համակարգը[26]:

ՀՀ-ում վերոնշյալ օրենքը ՊՄԳ-ն դիտարկում է միայն պետական և մասնավոր գործընկերոջ միջև համաձայնագրի տեսքով և չի նախատեսում ինտեգրման առավել լայն ձևաչափեր, կազմակերպահրավական միավորումներ, որոնք թույլ կտան օգտագործել առավել լայն գործիքակազմ: Փաստորեն, տվյալ օրենքը չի պատասխանում այն հարցին, թե կարո՞ղ է արդյոք ծրագիրը իրականացնող գործընկեր կողմ հանդիսանալ պետական և մասնավոր գործընկերների կողմից համատեղ ստեղծված իրավաբանական անձը: Վերջինս միջազգային պրակտիկայում ընդունված ձևաչափ է (կորպորատիվ կամ ինս-

[24] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի ծրագիրը, https://www.gov.am/files/docs/3133.pdf, էջ 47:

[25] Տե՛ս «Պետություն–մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ընդունված 2019 թվականի հունիսի 28-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docID=132596

[26] Տե՛ս ՀՀ Կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1183-Ն որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166779

տիտուցիոնալ ՊՄԳ), որը հիմնականում իրականացնում է ենթակառուցվածքների օբյեկտների վերակառուցում (հազվադեպ՝ կառուցում) և դրան հաջորդող շահագործում: ՌԴ-ում այս ձևն օգտագործվել է օդանավակայանների ենթակառուցվածքների, ինչպես նաև առողջապահության կառավարման ոլորտում[27]:

2021 թ. հուլիսի 13-ին ուժի մեջ է մտել «Պետություն–մասնավոր գործընկերության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն և լրացում նախատեսող օրենսդրական փաթեթը, որի մշակման աշխատանքներին մասնակցել է նաև Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդը:

Օրենքի լիարժեք կիրարկման տեսանկյունից մեկ այլ կարևոր փաստաթուղթ է ՀՀ Կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1183-Ն որոշումը[28], որտեղ սահմանված են պետություն–մասնավոր գործընկերության ընթացակարգը, պետություն–մասնավոր գործընկերության ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը, պետություն–մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, պետություն–մասնավոր գործընկերության ստորաբաժանումը, պետություն–մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը:



Գծապատկեր 1. ***ՀՀ-ում իրականացված ՊՄԳ ծրագրերի քանակական համեմատական՝ ըստ ոլորտների, 1990–2022[29]***

Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների՝ ՀՀ-ում 1990–2022 թթ. իրականացվել է 18 ՊՄԳ ծրագիր՝ 2.6 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումներով: ՊՄԳ ծրագրերը ՀՀ-ում իրականացվել են ենթակառուցվածքային ոլորտներում՝ էներգետիկա, երկաթգիծ, օդանավակայաններ, ջրամատակարարում, հեռահաղորդակցություն, ընդ որում, քանակային և գումարային առումով ավելի շատ ծրագրեր իրականացվել են էներգետիկայի ոլորտում. 8 ծրագիր՝ ընդհանուր 1.3 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումներով:

---

[27] Տե՛ս Doing business in Russia , Infrastructure and public private partnerships, 2021, https://seamless.legal/en/rus/publication/doing-business-in-russia/infrastructure-public-private-partnerships

[28] Տե՛ս ՀՀ Կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1183-Ն որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166779

[29] Աղբյուրը՝ World Bank, Infrastructure Finance, PPPs & Guarantees, https://ppi.worldbank.org/en/snapshots/country/armenia



Գծապատկեր 2. ***Ներդրումներ նախագծերում՝ ըստ ոլորտների, 1990–2022 թթ. (մլն ԱՄՆ դոլար)***[30]

ՀՀ-ում իրականացված ՊՄԳ նախագծերը մեծ մասամբ հիմնվել են արդեն իսկ գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերակառուցման վրա: ՀՀ-ում չկան ձախողված կամ դադարեցված ՊՄԳ ծրագրեր, դրանք ակտիվ շահագործվող ենթակառուցվածքներ են: ՀՀ-ում ենթակառուցվածքների զարգացման աստիճանը, չնայած վերջին տարիներին աճող տեմպերին, դեռևս շարունակում է ներդրումային միջավայրի գրավիչ լինելու տեսանկյունից մնալ ցածր:

Աղյուսակ 1

ԵԱՏՄ երկրների ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի մասնակցությունը, 1990–2022 թթ.[31]

	ՀՀ	Բելառուս	ՌԴ	Ղազախստան	Ղրղզստան
ՊՄԳ ծրագրերի քանակը	17	7	386	50	6
Ներդրումների ընդհանուր ծավալը, մլն ԱՄՆ դոլար	2623	6374	82031	5809	140
Մեկ ծրագրի հաշվով ներդրումը, մլն ԱՄՆ դոլար	154.3	910.6	212.5	116.2	23.3

ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերի անդրանիկ քայլերն արվել են կառավարման պատվիրակման և երկարաժամկետ վարձակալության պայմանագրերի ձևաչափով՝ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների բնականոն աշխատանքի կազմակերպման ոլորտում: Այս տեսակի մեջ առաջին

[30] Նույն աղբյուրը:

[31] World Bank, Infrastructure Finance, PPPs & Guarantees,
https://ppi.worldbank.org/en/snapshots/country/armenia
https://ppi.worldbank.org/en/snapshots/country/russian-federation
https://ppi.worldbank.org/en/snapshots/country/belarus
https://ppi.worldbank.org/en/snapshots/country/kazakhstan
https://ppi.worldbank.org/en/snapshots/country/kyrgyz-republic

պայմանագիրը կնքվել է Երևանի «Երևանի ջրմուղկոյուղի» կազմակերպության և իտալական «ACEA S.p.A» ընկերության միջև: Այն վավերացվել էր 4 տարով՝ հիմնվելով կատարողական ցուցանիշների (Key Performance Indicators, KPI) գնահատման համակարգի վրա: Պայմանագիրն իր կառուցակարգով հիբրիդային էր և համատեղում էր կոնցեսիայի և վարձակալության տարրեր:

2000 թ. փետրվարի 14-ին Երևանում կնքվեց Երևան քաղաքում ջրամատակարարման և կոյուղու ծառայությունների մատուցման կառավարման պայմանագիրը, որով իտալական «Էյ Սի Ի Էյ և Քամփընի Արմինիըն Յութիլիթի Սքարլ» ընկերությունը, որպես մասնավոր օպերատոր, ստանձնում էր Երևանի «Ջրմուղ-կոյուղի» պետական փակ բաժնետիրական ընկերության շահագործման, կառավարման և պահպանման գործառույթները: Պայմանագրով մասնավոր օպերատորի վրա պատասխանատվություն դրվեց ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների շահագործման և պահպանման, սպասարկումների դիմաց ծառայությունից օգտվող շահառուներին վճարման հաշիվների ներկայացման և վճարումների հավաքագրման համար: Բացի այդ, օպերատոր ընկերությունը կառավարում էր կապիտալ ներդրումների ֆոնդը, որը բաղկացած էր Կառավարության ներդրումներից և համակարգի կարևոր տարրերի վերանորոգման ու արդիականացման համար Համաշխարհային բանկի կողմից տրամադրված վարկից: Սահմանվել էին նպատակային 92 կատարողական ցուցանիշներ: Կատարողական ցուցիչների հիմքով կառավարման պատվիրակման պայմանագիրը տարբերվում է կոնցեսիայի և վարձակալության պայմանագրերից և, իհարկե, ամբողջական մասնավորեցումից: Դրա հիմնական բնութագրիչներն էին. գործողության ավելի կարճ ժամանակահատվածը, սեփականությունը պահպանելուև պետության՝ ավելի լայն վերահսկողության հնարավորությունը, միաժամանակ՝ կատարողական ցուցանիշների բարելավմանն ուղղվածառաջնահերթ միջոցառումների հաջող իրականացման համար օպերատոր ընկերությանը խրախուսելու մեխանիզմը, իսկ պայմանագրի ավարտից հետո կատարողական ցուցանիշների բարելավման և սպասարկման որակի բարձրացման արդյունքներով կոնցեսիոների կամ վարձակալի ընտրությունն ու ներգրավումը ավելի բարենպաստ պայմաններով:

Ոլորտում իրականացված առաջին ՊՄԳ ծրագրի հաջող իրականացումից հետո այն շարունակվեց ֆրանսիական «Վեոլիա Գրուպ»-ի հետ, որը 2006–2016 թթ. կառավարել է մայրաքաղաքի ջրմուղ-կոյուղին՝ ի դեմս «Երևան Ջուր» ՓԲԸ-ի, և այնուհետև մրցութային կարգով կառավարել է հանրապետության ջրմուղ-կոյուղու բոլոր համակարգերը: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն 2016 թ. նոյեմբերի 21-ին «Վեոլիա Գրուպ»-ի և ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ վարձակալության եռակողմ պայմանագրով, սկսած 2017 թ. հունվարի 1-ից, 15-ամյա ժամկետով ստանձնել է ոլորտի միասնական օպերատորի պարտականությունները[32]:

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում իրականացվող ՊՄԳ ծրագրերը կրում են երկարատև բնույթ: ՀՀ-ում իրականացված ՊՄԳ ծրագրերի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք էական ազդեցություն ունեցան

[32] Տե՛ս Վեոլիան Հայաստանում, https://www.veolia.am/hy/mer-masin/mer-masin/veolian-hayastanowm

ոլորտում իրականացվող բարեփոխումների վրա՝ հանգեցնելով ինստիտուցիոնալ և կազմակերպական նոր լուծումների, որոնք տարածվում են ամբողջ ոլորտում:

ՀՀ-ում ՊՄԳ ծրագրի հաջող օրինակներից է Հայկական երկաթուղու կոնցեսիոն պայմանագիրը: 2008 թ. փետրվարի 13-ին Երևանում Ռուսական երկաթուղիներ ԲԲԸ-ի և ՀՀ-ի միջև կնքվեց կոնցեսիոն պայմանագիր՝ «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ն Հարավկովկասյան երկաթուղի (ՀԿԵ) ՓԲԸ-ին 30 տարի ժամկետով կոնցեսիոն կառավարման հանձնելու մասին:[33]

Կոնցեսիոն պայմանագրի պայմանական պարտավորությունների ֆիսկալ ռիսկայնության կարգավիճակը մինչև համավարակը գնահատվում էր միջին, իսկ 2020–2022 թվականներին, առողջապահական շոկով պայմանավորված՝ նշանակալի:

«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ կոնցեսիոն պայմանագիրը գործում է 2002 թ-ից՝ Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի համար, իսկ 2007 թ-ից ներառում է նաև Գյումրու «Շիրակ» օդանավակայանը: Մայր ընկերությունը աշխարհի օդանավակայանների խոշորագույն օպերատորներից է՝ «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» ընկերությունը, որը ցուցակված է Նյու Յորքի ֆոնդային բորսայում:

«Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ ընկերությունը հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության առանցքային համալիր է, որը նախկինում պետական մասնակցությամբ ընկերություն էր. մասնավորեցվել և վաճառվել է էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող «Քոնթուր Գլոբալ» խոշոր միջազգային խմբին: Ընկերությունն իր ամբողջ հզորությունը և փաստացի արտադրված էլեկտրաէներգիան վաճառում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (ՀԷՑ)՝ ՀԾԿՀ-ի կողմից հաստատված սակագներով: ՀԷՑ ընկերությունը պարտավոր է գնել արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան, իսկ չգնելու դեպքում՝ վճարել փոխհատուցում, որը մինչ այժմ չի կիրառվել: Ամենախոշոր պայմանական պարտավորությունը պետության կողմից հիմնական միջոցների հետգնումն է, որոնց արժեքը 2019 թ. վերջին կազմել է 90.1 մլրդ դրամ, սակայն հիմնական միջոցների ավելացման հետևանքով կհասնի 99.6 մլրդ դրամի: Ընկերությունը ներկայում մարում է Վերականգնման վարկերի բանկից (KfW) եվրոյով ստացված վարկը, ինչպես նաև 3 այլ կազմակերպություններից, այդ թվում՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայից ԱՄՆ դոլարով ստացված վարկերը (մյուս երկու վարկերը կապված են Նիդեռլանդների և Գերմանիայի կառավարությունների հետ), որոնք տրամադրվել են թե՛ մինչ մասնավորեցումը և թե՛ մասնավորեցումից հետո[34]:

«Ռենկո» Ս.Պ.Ա.-ն և «Արմփաուեր» ՓԲԸ-ն Երևանում կառուցում են ջերմային էլեկտրակայան (Երևանի նոր ՋԷԿ): «Ռենկո» Ս.Պ.Ա.-ն աշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության խոշոր գործունեություն իրականացնող իտալական «Ռենկո» էներգետիկական խմբի և գերմանական «Սիմենս» խմբի

---

[33] Տե՛ս Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագրի նախագծին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին լիազորություն վերապահելու մասին, ՀՀ Կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 83-Ա որոշում:

[34] Տե՛ս ՀՀ Կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձ, էջ 216:

դուստր ընկերությունն է: Ծրագիրը գտնվում է շինարարության փուլում: Ծրագրի գնահատված արժեքը կազմում է մոտ 300 միլիոն ԱՄՆ դոլար, որի 70 տոկոսը ֆինանսավորվում է ՄՖԿ վարկի միջոցով: Կոնցեսիայի ժամկետը 20 տարի է՝ սկսած առևտրային շահագործման մեկնարկից՝ 2022 թ.[35]:

Հիմնական պայմանական պարտավորությունը ՀՀ Կառավարության կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում կայանի հետգնման պարտավորությունն է (նյութականացման դեպքերն են՝ օտարումը, բռնագրավումը, զավթումը, Կառավարությանն առնչվող անվճարունակության դեպքի տեղի ունենալը, պայմանագրի շրջանակներում պետության կողմից տրված հավաստիացումների և երաշխիքների էական խախտումը, ծրագրի կառուցման կամ շահագործման՝ կառուցապատողի կարողության վրա էականորեն և անբարենպաստ կերպով ազդող օրենսդրական փոփոխությունը):

Առկա է նաև պետության կողմից երաշխավորված՝ ՀԷՑ ընկերության պարտավորություն՝ գնել արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան, իսկ չգնելու դեպքում վճարել փոխհատուցում, սակայն այդ պայմանական պարտավորությունը դեռևս չի գործում, քանի որ կայանը դեռ շահագործման չի հանձնվել: Քանի որ ծրագիրն այլևս հնարավոր չէ դադարեցնել, կամ էլ ծրագրի իրականացումը ստանձնելու դեպքում պետությունը ստիպված կլինի այն ավարտին հասցնել, ապա ներկայում պայմանական պարտավորությունը սահմանափակվում է ներդրման 300 մլն ԱՄՆ դոլար գումարով: Առևտրային շահագործման մեկնարկից հետո այդ գումարը ժամանակավորապես կբարձրանա:

2021 թ. հունիսի 18-ի Կառավարության որոշմամբ հաստատվել են ՀՀ-ում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ՖՎ ծրագրով կազմակերպված մրցույթի ընթացակարգի արդյունքները՝ հաղթող ճանաչելով «Մասդար» ընկերությանը: Ծրագրի իրականացման շուրջ կնքվել է Կառավարության աջակցության համաձայնագիր. ֆինանսական կայացման վերջնաժամկետ է սահմանվում 2022 թ. դեկտեմբերը:

«Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային կայանի նախագծի շրջանակներում կառուցվում է առաջին ամենամեծ արևային էլեկտրակայանը՝ 55 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Այն պատկանում է La Providencia և FRV իսպանական մասնագիտացված խմբերին և ֆինանսավորվում է IFC-ի, EBRD-ի և Ֆինլանդիայի կառավարության վարկային միջոցներով: Ծրագրի ընդհանուր արժեքը 50.2 մլն ԱՄՆ դոլար է: Ֆինանսական փակումը տեղի է ունեցել 2020 թ. հուլիսին, իսկ աշխատանքների ավարտը նախատեսված էր 2022 թ.: Նախագծի իրականացման արդյունքում առկա են մի շարք պայմանական պարտավորություններ, մասնավորապես՝ արտադրվող էլեկտրաէներգիայի համար գնման երաշխիք ՀՀ Կառավարության կողմից, և անբարենպաստ իրադարձությունների դիմաց լրացուցիչ հատուցման իրավունք, որը կարող է առաջանալ միայն շինարարության ավարտից հետո մեկ տարվա ընթացքում:

2019 թ. դեկտեմբերին ՀՀ Կառավարությունը ստորագրել է «Մասդար Արմենիա ներդրումային նախագիծ» հուշագիրը: «Մասդարը» զբաղվում է վերականգնվող էներգիայի, կայուն քաղաքային զարգացման և մաքուր տեխնո-

[35] Տե՛ս նույն տեղը, էջ 217:

լոգիաների առևտրայնացմամբ և տեղակայմամբ՝ գլոբալ կայունության մարտահրավերները լուծելու համար: «Մասդարը» գործում է ավելի քան 30 երկրում:

Ծրագրով նախատեսված է Հայաստանում կառուցել 200 մեգավատ հզորությամբ արևային էլեկտրական: Ծրագիրը մշակվել է նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության և շահագործման (DFBOO) հիմունքներով: Ծրագիրն իրականացնելու է «Մասդարի» և ԱՆԻՖ-ի կողմից ստեղծված համատեղ ընկերությունը: «Մասդարն» ի սկզբանե առաջարկել էր ծրագրի համար 0,0299 ԱՄՆ դոլար/կՎտժ սակագին: Մրցակցային և թափանցիկ գործընթաց ապահովելու համար Կառավարությունը նախաձեռնեց միջազգային մրցույթ 200 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար՝ հնարավորություն ընձեռելով մասնակիցներին առաջարկելու իրենց սակագները: Մրցույթի հաղթող կճանաչվեր ամենացածր սակագին առաջարկող ընկերությունը:

ՀՀ ՏԿԵ նախարարությունը հայտարարել է միջազգային մրցույթ՝ ընկերություններին հրավիրելով մասնակցելու իրենց հայտերով: Մրցութային գործընթացի սկզբնական փուլին մասնակցել է 3 ընկերություն՝ «Մասդարը», «Գազպրոմը» և «Հիդրո Չայնա» կորպորացիան: 2021 թվականի հուլիսին «Մասդարը» ընտրվել է որպես 200 ՄՎտ կոմունալ մասշտաբի արևային ծրագրի մրցույթի հաղթող՝ 0,0290 ԱՄՆ դոլար/կՎտժ վերջնական գնով: Ծրագրի գնահատված չափը 174 մլն ԱՄՆ դոլար է: ԱՆԻՖ-ը կտնօրինի բաժնետոմսերի 15 տոկոսը, իսկ «Մասդարը»՝ 85 տոկոսը: Համատեղ ընկերությունը ծրագրի ֆինանսավորման համար կարող է դիմել միջազգային կամ տեղական բանկերին:

Արևային կայանը կտեղակայվի Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ բնակավայրերում՝ մոտ 500 հեկտար տարածքի վրա: Տարածքը բարձր է արևային ճառագայթման համար, և հողը գյուղատնտեսական նպատակներով անօգտագործելի է:

Ծրագրի նպատակն է խթանել մաքուր էներգիայի ենթակառուցվածքների զարգացումը Հայաստանում: Ծրագիրը կնպաստի արդյունաբերության զարգացմանը, կստեղծի նոր աշխատատեղեր և ներդրողների ուշադրությունը կգրավի Հայաստանում վերականգնվող էներգետիկայի ոլորտի վրա:

200 ՄՎտ հզորությամբ մեկ այլ ծրագրի հետագա քննարկումները շարունակվում են: Շուրջ 600 հազար ԱՄՆ դոլար կհատկացվի Հայաստանի Թալին և Դաշտադեմ համայնքներին՝ սոցիալական ծրագրերի զարգացման համար: ԱՆԻՖ-ը պարտավորվում է ապահովել իր ծրագրերի կայուն, դրական սոցիալական ազդեցությունը: Սոցիալական ներդրումային ծրագրերը նախագծվելու են հարակից համայնքների համար լրացուցիչ սոցիալական և տնտեսական արժեք ստեղծելու նպատակով: Համատեղ ընկերությունը կիրականացնի ՇՄԱԳ-ի նախագիծ՝ համաձայն Հայաստանի օրենսդրության պահանջների և «Մասդարի» կողմից ստանձնած լավագույն միջազգային փորձի: Շինարարական աշխատանքները կիրականացվեն համայնքների անվտանգության և բարեկեցության համար առավելագույն պատասխանատվությամբ, հնարավորության դեպքում՝ տեղական աշխատուժի ներգրավմամբ:

Զբոսաշրջության բնագավառում այս պահին ընթանում է Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքում լեռնադահուկային ավան հիմնելու ծրագրի նախապատրաստական փուլը, որը ևս հիմնված է պետական աջակցության վրա:

ՀՀ Կառավարությունը 2021 թվականի հուլիսի 29-ի N 1246-Ա որոշմամբ հավանություն է տվել «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի տարածքում 2080 հեկտար ընդհանուր մակերեսով հողամասում իրականացվելիք ներդրումային ծրագրին: Ըստ ծրագրի փուլերի հաջորդականության՝ համապատասխան գերատեսչություններին հանձնարարվել է ապահովել ծրագրով նախատեսված հողատարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու գործընթացը, օժանդակել ծրագրով նախատեսված հողատարածքների նպատակային նշանակության փոփոխման՝ օրենսդրությամբ սահմանված գործընթացին՝ համագործակցելով տվյալ համայնքի ավագանու հետ՝ հաշվի առնելով, որ նպատակային նշանակության փոփոխությունն իրականացվելու է ավագանու որոշման հիման վրա:

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 6-ի N 70 որոշմամբ հավանություն է տրվել «Մագնոլիա-Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից բնակելի թաղամասի կառուցման ներդրումային ծրագրին: ՀՀ Կառավարության 2021 թվականի մարտի 18-ի 355-Ա որոշմամբ հավանության է արժանացել «Մագնոլիա-Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման ներդրումային ծրագիրը[36]:



Գծապատկեր 3. ***Համայնքային բյուջեի կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, %***[37]

[36] Տե՛ս ՀՀ Կառավարության 2021 թվականի մարտի 18-ի 355-Ա որոշումը, https://www.e-gov.am/gov-decrees/item/35798/

[37] ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքէջ, ՀՀ համայնքների բյուջետային ծախսեր, ըստ տարիների, https://mtad.am/pages/budget-expenditures-of-ra-communities

Ենթակառուցվածքների հետագա բարելավման հնարավորությունների բացահայտման տեսանկյունից կարևոր է դիտարկել համապատասխան ենթակառուցվածքների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ընդհանուր ծավալներն և աղբյուրները՝ դրանք համադրելով ՀՀ պետական և համայնքային բյուջեներում այդ նպատակով նախատեսված միջոցների հետ: Նման համադրումը թույլ է տալիս փաստել լրացուցիչ կապիտալի անհրաժեշտությունը, այդ թվում՝ մասնավոր հատվածից ՊՄԳ ձևաչափով ներգրավման հնարավորությունն ու նպատակահարմարությունը:

ՀՀ համայնքային բյուջեի դինամիկան ըստ մարզերի և Երևան քաղաքի դիտարկելու պարագայում ակնհայտ է դառնում, որ համայնքային բյուջեում առյուծի բաժինը՝ միջին հաշվով 52,8 տոկոսը, կենտրոնացած է Երևանում, իսկ միայն մնացած մասը բաշխված է 10 մարզերի միջև, այն էլ՝ անհավասարաչափ:

2008–2016 թթ. համայնքային բյուջեի անհավասարաչափ բաշխվածությունն ավելի է խորացել: 2017 թ-ից Երևան համայնքի մասնաբաժինն աստիճանաբար նվազում է ընդհանուր համայնքային բյուջեի կառուցվածքում, սակայն Երևանի մասնաբաժնի նվազմանը զուգընթաց աճում է համեմատաբար «ապահովված» մարզերի կշիռն ընդհանուր համայնքային բյուջեում (Կոտայք, Արմավիր), ինչը նոր հող է նախապատրաստում համայնքների բևեռվածության և տարածքային անհամաչափ զարգացման խորացման համար՝ այժմ արդեն այլ մարզերի և համայնքների մասնաբաժինների ավելացման արդյունքում:



Գծապատկեր 4. ***Համայնքային բյուջեի կապիտալ ծախսերի կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, %[38]***

Գրեթե նույն պատկերն է համայնքային բյուջեի ծախսերի «կապիտալ ծախսեր» մասի կառուցվածքը դիտարկելիս: 2008–2014 թթ. համայնքային բյուջեի ֆոնդային մասի, միջին հաշվով, 48 տոկոսն ուղղվել է միայն Երևան

[38] Նույն աղբյուրը:

համայնքում կապիտալ ծախսերի իրականացմանը, ինչը խորացրել է տարածքային անհամաչափ զարգացումը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ծախսերի կառուցվածքում դրական միտում է արձանագրվել 2015 թ-ից, երբ համայնքային բյուջեով կապիտալ ծախսերի կշիռն աստիճանաբար ավելացել է Արարատի, Գեղարքունիքի, հետագայում նաև Սյունիքի մարզերում:

ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերի իրականացման փորձը վկայում է, որ 2022 թ. դրությամբ երկրում ՊՄԳ-ների ինստիտուցիոնալ զարգացումը կարելի է բնութագրել կայացած, միևնույն ժամանակ, առկա են որոշ առանցքային խնդիրներ, որոնց լուծումը խիստ կարևոր է ՊՄԳ ոլորտի ընդլայնման և արդյունավետության բարձրացման առումներով:

Եզրակացություն: Թեպետ տեսաբանները ՊՄԳ-ն տարբեր կերպ են բնորոշում, այնուամենայնիվ, դա գործնականում նպատակաուղղված է ենթակառուցվածքների, իսկ վերջին տարիներին տնտեսության նաև այլ ոլորտների զարգացմանը և այդ գործում պետության ու մասնավորի կազմակերպական, նյութական, ֆինանսական և այլ հնարավորությունների միավորմանն ու կենտրոնացմանը: ՊՄԳ-ն բավականին լավ մոդել է պետության կայուն զարգացման հայեցակարգի շրջանակներում նոր ներդրումների ներգրավման, լրացուցիչ ռեսուրսների օգտագործման, տարբեր ոլորտներում լավ արդյունքներ գրանցելու համար, ուստի, պետությունը պետք է հնարավորինս վստահելի միջավայր, բարենպաստ և գործունեության հստակ պայմաններ ստեղծի, որպեսզի հավանական ներդրողն ընդունի ներդրումային առաջարկը և համագործակցի՝ տվյալ ոլորտում հանրային ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերի իրականացումը հիմնվում է միջազգայնորեն կիրառվող մոդելների և ՊՄԳ մեխանիզմի գծով առաջատար դիրք զբաղեցնող երկրների համարժեք փորձի ընդօրինակման վրա: ՀՀ-ում ՊՄԳ-ն զուտ մասնավորեցման մեխանիզմ չէ, ճիշտ է, գործընկերության գերիշխող կողմը պետությունն է, սակայն մասնավոր գործընկերոջ իրավունքների իրացումը երաշխավորված է:

ՊՄԳ մեխանիզմի արդիականացումը ենթադրում է օրենսդրական կարգավորման բարելավում, կայուն իրավական դաշտի ամրագրում, ՊՄԳ ծրագրերի համար ընդունելի նոր մոդելների տեղայնացում, ՊՄԳ ծրագրերի փորձարկում ու ընդլայնում, պետության կողմից ծրագրերի խթանման գործիքակազմի ավելացում և նպատակային գործադրում: ՊՄԳ-ները ստեղծում են զգալի հարկաբյուջետային ռիսկեր՝ կապված երկարաժամկետ պայմանագրային ժամկետում հնարավոր փոփոխությունների հետ, որոնք բնական աղետների, պատերազմի, տեխնոլոգիական, ժողովրդագրական փոփոխությունների հետևանք կարող են լինել: Փոփոխություններ կարող են առաջանալ նաև պետական մարմիններում՝ պայմանավորված քաղաքականության կամ օրենսդրության փոփոխությամբ: Կարևոր է նաև ՊՄԳ ծրագրերի համար ներդրումային հարթակի կայացումը, պետական և մասնավոր գործընկերների միջև ռիսկերի բաշխման առավել հավասարակշռող արդյունավետ մատրիցի կառուցումը:

ՊՄԳ ընթացակարգերը կարգավորող իրավական դաշտի կատարելագործումը վկայում է, որ ՀՀ Կառավարությունը ստանձնել է ՊՄԳ ամբողջական, համակարգային մոտեցման և Հայաստանում իրականացման համար ամուր հիմքերի մշակման հանձնառություն՝ նպատակ ունենալով մասնավոր հատվածի ուժեղ կողմերի և հնարավորությունների համախմբման միջոցով նպաստելու տնտեսական և սոցիալական զարգացմանը Հայաստանում, միաժամանակ ժամանակակից տեխնոլոգիաների ներգրավման, երկկողմ պարտավորությունների սահմանման միջոցով խթանելու միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող հայկական ընկերությունների կայացումը:

ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման խնդիրն իր արտացոլումն է գտնում պետություն–մասնավոր համագործակցությամբ սոցիալական ենթակառուցվածքներում ներդրումների իրականացման մեջ, քանի որ համայնքային սահմանափակ բյուջեի հիմնական միջոցներն ուղղվում են վարչական ծախսերի կատարմանը, իսկ բյուջեի ֆոնդային մասը հիմնականում չի բավարարում ենթակառուցվածքների պահպանության, առավել ևս՝ վերակառուցման ծախսերի իրականացմանը:

Մեր ուսումնասիրությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում ՊՄԳ ծրագրերը հիմնականում իրականացվել են համապետական մակարդակով և չեն ներառել տարածաշրջանային, միջհամայնքային կամ համայնքային մակարդակները, բացառությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի, որտեղ ՊՄԳ ծրագրերը մայրաքաղաքից և խոշոր քաղաքներից միևնույն մասնավոր գործընկերոջ միջոցով ներթափանցել են մարզային և համայնքային մակարդակ:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Կառավարության 2019 թվականի ծրագիրը, https://www.gov.am/files/docs/3133.pdf
2. «Պետություն–մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2019 թվականի հունիսի 28-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docID=132596
3. ՀՀ Կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1183-Ն որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166779
4. ՀՀ Կառավարության 2021 թվականի մարտի 18-ի 355-Ա որոշումը, https://www.e-gov.am/gov-decrees/item/35798/
5. ՀՀ Կառավարության 2022 թ., 2023 թ. բյուջետային ուղերձներ:
6. «Վիոլիան» Հայաստանում, https://www.veolia.am/hy/mer-masin/mer-masin/veolian-hayastanowm
7. Սարգսյան Հ., Հանրային և մասնավոր գործընկերության հիմնական առանձնահատկությունները, Բանբեր Երևանի համալսարանի, № 2 (23), 2017, https://journals.ysu.am/index.php/bulletin-ysu-economics/article/view/259/182
8. Аблаев. И.М., Основные принципы государственно-частного партнерства в условиях модернизации российской экономики, https://dspace.kpfu.ru/xmlui/bitstream/handle/net/105892/5_2013_2_99_ss17_20.pdf?sequence=-1

9. Айрапетян М. С., Зарубежный опыт использования государственно-частного партнерства, https://center-bereg.ru/o3811.html
10. Бедняков А., Роль инфраструктуры в обеспечении устойчивого социально-экономического развития и конкурентоспособности: актуальные вопросы в России и за рубежом. Статья, 2021, https://roscongress.org/materials/rol-infrastruktury-v-obespechenii-ustoychivogo-sotsialno-ekonomicheskogo-razvitiya-i-konkurentosposo/
11. Варнавский В., Государственно-частное партнерство в России: проблемы становления, https://strana-oz.ru/2004/6/gosudarstvenno-chastnoe-partnerstvo-v-rossii-problemy-stanovleniya
12. Громова Е.А., Государственно-частное партнерство в цифровую эру: поиск оптимальной правовой формы, https://urfac.ru/?p=1125
13. Делмон Дж., Государственно-частное партнерство в инфраструктуре; практическое руководство для органов государственной власти.
14. Зельднер А.Г., Смешанная социально-устойчивая экономическая система: проблемы собственности, «Экономические науки», 2010, https://www.hse.ru/data/2010/09/29/1219815241/ecsn_201001.pdf
15. Леонова Г.И., Проблемы и перспективы развития государственно – частного партнерства (научная статья): Индустриальная экономика. 2022, № 3(4), https://www.elibrary.ru/item.asp?id=48688035
16. Мулява С. В., Совершенствование функционирования государственно-частного партнерства в России, http://www.m-economy.ru/art.php?nArtId=4978
17. Петров Д. А., Государственно-частное партнерство: понятие и правовые формы реализации. Вестник Санкт-Петербургского университета. Право, 2012, (2), https://lawjournal.spbu.ru/article/view/3977
18. Чернов А.В., Государственно-частное партнерство в сфере малоэтажного жилищного строительства. Журнал «Недвижимость и инвестиции. Правовое регулирование», 4 (45), декабрь, 2010, https://dpr.ru/journal/journal_43_11.htm
19. Шацкая Е.Ю., Роль инфраструктуры как активного элемента обеспечения устойчивого развития современных экономических систем, «Экономика, предпринимательство и право», том 12, № 4, 2022 – doi: 10.18334/epp.12.4.114364, https://1economic.ru/lib/114364
20. Green Paper on Public-Private Partnerships and Community Law on Public Con- tracts and Concessions Commission of the European Communities Brussels, 2003.
21. Ham H. van, Koppenjan J., Building Public-Private Partnerships: Assesing and Manag- ing Risks in Port Development//Public Management Review, vol. 3, № 4, 2001, https://www.researchgate.net/publication/254348156_Building_public-private_partnerships_Assessing_and_managing_risks_in_port_development#fullTextFileContent
22. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166779

23. https://ppp.worldbank.org/public-private-partnership/about-public-private-partnerships
24. https://www.icao.int/sustainability/pages/im-ppp.aspx
25. https://www.veolia.am/hy/mer-masin/mer-masin/veolian-hayastanowm
26. https://ppi.worldbank.org/en/snapshots/country/armenia
27. https://ppi.worldbank.org/en/snapshots/country/russian-federation
28. https://ppi.worldbank.org/en/snapshots/country/georgia
29. https://ppi.worldbank.org/en/snapshots/country/turkey
30. https://ppi.worldbank.org/en/snapshots/country/azerbaijan
31. https://ppi.worldbank.org/en/snapshots/country/belarus
32. https://ppi.worldbank.org/en/snapshots/country/kazakhstan
33. https://ppi.worldbank.org/en/snapshots/country/kyrgyz-republic
34. https://mtad.am/pages/budget-expenditures-of-ra-communities

ГАЯНЕ АВАГЯН
Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук

КНАРИК ВАРДАНЯН
Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук

Государственно-частное партнерство как стимул развития инфраструктуры.– Государственно-частное партнерство (ГЧП) широко распространено в мире как эффективный механизм, способствующий реализации значимых государственных программ, в частности, по формированию, развитию инфраструктуры и предоставлению услуг. В статье обоснована роль государственно-частного партнерства в развитии инфраструктур, а также подчеркнута важность консолидации материальных, финансовых, человеческих ресурсов и средств государства и частного сектора.

В статье утверждается, что государственно-частное партнерство является эффективным механизмом, поскольку технологии и инновации частного сектора сочетаются со стимулами государственного сектора и что только государственные средства не могут финансировать все проекты по обслуживанию и развитию инфраструктуры. В результате объединения ресурсов государства и бизнеса в рамках реализуемых проектов формируются дополнительные конку-рентные преимущества, а риски распределяются между государством и бизнесом. Государственные финансовые ресурсы в РА также ограничены, что вызывает снижение качества услуг, предоставляемых населению, и ряда обязательств, выполняемых государством. В сложившейся ситуации неоспорима важность формирования и развития ГЧП, что в долгосрочной перспективе приведет к стабильному качественному росту инфраструктур и предоставляемых услуг.

Авторы представили программы ГЧП, реализуемые в некоторых секторах экономики РА, раскрыли их особенности.

Проведенное исследование позволило сделать вывод, что реализация программ ГЧП в нашей стране также может стать опорой инновационного развития производственных и социальных инфраструктур.

Ключевые слова: *государственно-частное партнерство, экономика, инфраструктура, государство, консолидация ресурсов*
JEL: L32, H54
DOI: 10.52174/29538114_2023.1-21

GAYANE AVAGYAN
Associate Professor at the Chair of Macroeconomics at Armenian State University of Economics, PhD in Economics

KNARIK VARDANYAN
Associate Professor at the Chair of Macroeconomicrs at Armenian State University of Economics, PhD in Economics

Public-Private Partnership as a Promotion for Infrastructure Development.– Public-Private Partnership (PPP) is widely recognized in the world as an effective mechanism contributing to the implementation of significant public programs, particularly in infrastructure formation, development, and service provision. This paper highlights the crucial role of public-private partnership in the development of infrastructures, and also emphasizes the importance of combining material, financial, human resources of both the state and private sectors. It argues that public-private partnerships are effective because they leverage private sector technologies and innovations while utilizing public sector incentives, acknowledging that government funds alone cannot finance all infrastructure maintenance and development projects. As a result of combining state and business resources within the implemented projects, additional competitive advantages are formed, and risks are distributed between the state and business entities.

In the Republic of Armenia, where public financial resources are limited, there is a decline in the quality of services provided to the population and a number of obligations carried out by the state. In the current situation, the importance of PPP formation and development is undeniable, which in the long run will lead to a stable qualitative growth of infrastructures and provided services.

The authors presented the PPP programs implemented in some sectors of the RA economy, identified their features.

The findings of the study allowed us to conclude that the implementation of PPP programs in our country can also become the pillar of innovative development of production and social infrastructures.

Keywords: *public-private partnership, economy, infrastructure, government, pooling of resources*
JEL: L32, H5
DOI: 10.52174/29538114_2023.1-21